

Փ Ո Ւ Ե Ն Ղ

Օ Ր Ա Պ Ի Ր

ԹԻԻ 444

ԵՐԵՎԱՆԻ

1869 ՀՈԿՏԵՄԲԵՐ 28

Ամեն օր կ'ըստարակուի : — Հատը 10 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիս պիտի վճարէ 100 թուոց համար իսկ դաւառացի մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման առջը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ փարի գրանիւր կից Նոր Գրատունը :

Կ. ՊՕԼԻՍ . — ԳՈՆՍՈՒԻՏԵ

	ըՇ	Ժր.
27 հոկա. երկու . երեկոց	46	46
28 հոկ. երեք . անուստ	46	40
	ժամը չորսին 46	45 ¹ / ₂

Ա Ղ Պ Ա Յ Ի Ն

Պատրիարքական հրաւիրակներն այս երեկոց գէպ ի Տրապիզոն համբայ կեննեն, կայսերական կառավարութեան կողմանէ յատկապէս օրոշեալ ճիարի—Նուորթի շոգեհաւով, որ նաւապետ իզդէթ պէյի հրամանատարութեան տակ կ'գնանուի :

Բարի ճանապարհ և երջանիկ վերադարձ կրարեմաղթեմք յամենայն սրտէ :

Ամեն . Պատրիարք Սրբազանը շաբաթ օրը Տրապիզոն հասած ըլլալու է, թէև տակաւին մինչև այս առաւօտ պաշտօնական լուր մ'եկած չէ Պատրիարքարան :

— Խառն Ժողովոյ մասնաժողովն այսօր նիստ ունի Ղալաթիոյ խորհրդարանը :

— Պատրիարքական հրաւիրակներէն Պարտիզակի արժ . Տ. Յովհաննէս քահանայն ալ չպիտի կրնայ երթալ Տրապիզոն, որովհետև կրնիմք թէ անձնական տկարութիւն ունի այս օրերս :

— Պրուսայի կառավարութիւնը կանչելով շաբաթ օրը չեղին ձեռք ու կարող արհեստաւորացի գլխաւորները, պատուիրեր է որ այսուհետև այսպիսի հանդերձներ չձեւեն ու չըկարեն . և թէ պիտի պատժուին այս պատուէրին չհնազանդողները : — Պրուսայի կառավարութիւնն այս օրոշումն բրեր է նկատելով որ Պրուսայի վիճակին մէջ շատցած են այս տեսակ հանդերձ հազեող և սրունքները բաց անվայելուչ կերպով պարտողները, այնպէս որ երևելի անձանց օմանց օրդիքըն ալ սիսեր են հետեիլ անոնց իբրև նորաձեւութեան մը :

Յիշեալ կառավարութեան կողմանէ միանգամայն խտաիւ պատուէր եղեր է որ հարսանեացի ու թլիսատութեան հանդէսներու հրահր տեղադրած ծախքեր ընելով նստուին, այլ պարզութեամբ կառարեն որ վայելուչ ու վեճ կըլայ :

Պրուսայի մէջ տեղի ունեցած այս բարեկարգութիւնը՝ արդարեւ օգտակար է հասարակութեան և հետեւաբար խորին շնորհակալութեան արժանի է տեղական բարեխնամ կառավարութիւնը, որ այսպէս ուշադրութիւն կընէ հասարակաց բարոյն ու օգտին :

Այս բարեկարգութիւնները անտարակոյս մեր ազգայնոց ուշադրութեան արժանի են : Մեր Ազգին մէջ ալ հարստեանց և ուրիշ այսպիսի հանդէսներու համար այնպիսի սովորութիւններ կան, որոնք պարզութեան ու վայելչութեան դէմ ըլլալէն դատ՝ մեր նիւթականին ալ մեծ վնասներ կ'առճառեն : Մեր մէջ ալ կան հանդերձի վայելչութեան ուշադրութիւն չընող և այլանդակու տամարդի կերպով հարստոյնք : Բարեկրթութիւնը աւելի ընտրելի է՝ արդեօք : Պարզութիւնը վայելչութիւնը ու անտեսութիւնը է՝ որ շահաւոր են մեր բարոյականին ու նիւթականին համար :

—Կլեմէք թէ, Մասիս լրագրոյն Խմբադիր—տնօրէն մեծ, իւթիւճեան կարապետ ազայն մօտերս Բ. Գրան մէջ պաշտօն մը պիտի ունենայ գոհացուցիչ ամօականաւ մը :

Չխնայանք թէ լրագրութեան գործը բոլորովին պիտի ձգէ՞, թէ՛ երկու պաշտօն մէկտեղ պիտի վարէ : Սակայն, կըսուի թէ՛ կառավարական պաշտօն ունեցողը չկրնար լրագրականութիւն ալ ընել :

Եթէ այս լուրը սապոյ է, մէկ կողմանէ ցաւ կ'սմանամք որ մեր մէկ մեծ սպասուի պաշտօնակցէն պիտի զըրկուինք. իսկ միւս կողմանէ կուրտիս

նամք որ աւելի բարձր ու շահաւոր գիրք մը կ'ունենայ : Երանի՛ թէ անոնց պէս բոլորովին չմոռնար Ազգը :

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ շարժու. քանի մ'օր է բարուլճայ ժամերով բոց մնաց Գարագեղի կամուրջը կայտերական նաւուց համար : Սովորական զգուշութիւնները չըլլալուն պատճառաւ, մէկ անդամուն գոյուած առեւը՝ բազմութիւնը իրարմէ յառաջ անցնելու համար զիրար մղելու ժամանակ՝ ձիւ մը ոտքը երկու դրան մէջ սեղմուեցաւ : Բարեբազգաբար մարդու մլաս չեղաւ, բայց կարելի է որ ուրիշ անդամներ ուրիշ ցաւով վտանգներ պատահին, եթէ արժան եղած զգուշութիւններն ի դարձ չգրուին :

Նոյն օրերը հասարակութեան մէջ սամաիկ դանդաւաններ կըլլային, կամուրջը ժամերով և գործի ու շոգեխաւուց ժամանակ բացուած ըլլալուն դէմ : Կյուսամք թէ այս իրաւացի դանդաւանները դայցած հասած են մինչեւ վերին իշխանութեան ականջը, և այս մասին հասարակաց նպաստաւոր տնօրինութիւն մը կըլլայ : Կարծեմք, աղէկ կըլլայ եթէ առաւօտուն շատ կանուխ և երեկոյին շատ ուշ բանալու հրաման ըլլայ որում անկ է :

—Սըրպի երիտասարդ իշխանը իւր ինսամակալաց մէկուն հետ մօտերս մայրաքաղաքս դալով, Եգիպտոս պիտի երթայ եղեր, Սուէիշի ջրանցքին բացման հանդիսին ներկայ գտնուելու համար :

—Աստղիոյ կայտեր արևելեան

ճամբորդութեան ծախսոց համար 700 հազար ֆիորին որոշուեր է :

—Պէտք չուր Ռուսական հիւսարտութեանին դիմացը եզոյ Շուէտի և Նորվիկիոյ դեսպանատան պատերը վար առնուելով, 12 կանգունի չափ տեղ ճամբու համար պիտի տրուի, և դեսպանատան շէնքն ալ ի հիմանց պիտի նորոյ ուրի :

Անոյս սկիզբները Աթէնքի մէջ նման չտեսնուած սուստութեամբ վտճարիկ մ'ենելով, կէս ժամու չափ ընկուզի մեծութեամբ կարկուտ գալէն յետոյ յորդ անձրևներ եկեր և քաղաքին ու շրջակայից բաւական միասնոր պատճառներ են :

Յիշեալ քաղաքին մէջ պատերուն վրայ թղթեր փակուցեր են, որով ժողովուրդը կարգուեն եզեր՝ սահմանադրական կառավարութեան եղանակը Յունաստանէն վերցունելու :

—Ներկայ ամսոյս Յին առաւօտուն Փարիզի մէջ ձիւն դալ սկսեր, մինչև երեկոյ տներ և խանութներուն ու շտամարաններուն առջևը ձիւն ժողովուրդուելով, առուտուրի արդեւք եզեր է : Կրտուի թէ այս ժամանակ Փարիզի մէջ այսպէս ձիւն դալը տեսնուած բան չէ :

—Օտեսայի կողմերը զիւղի մը մէջ երկի կնիկ, երկու տղայ և 70 տարեկան ծերունի կին մը սողանցուած դրասուեր են : Ռատիկանութիւնը քննութիւններ ընելով՝ ստուգեր է թէ այս ընտանիքը երեք կովէ և ձիէ մը զատ ուրիշ բան չունեցող աղքատ ընտանիք մ'ըլլալով՝ սպանութեան հեղինակը աւագակներ չեն, այլ վրէժխնդրու-

թեան մը համար եղած է : Մարդասպանները ամենայն խստութեամբ կ'ինառուին :

—Չինաստանի կառավարութիւնը յատկապէս դործակալներ որոշեր է, եւրոպայի այլևայլ կողմերն երթալու և անոնց վիճակին վրայ տեղեկութիւն ստանալու պաշտօնով :

Ստանք մօտերս իրենց համար որոշեալ տեղերը պիտի ուղևորին : Հեռերնին տրուած է Չինաստանի այլևայլ տարանքներ, որպէս զի եւրոպացոց ցուցներով անոնց ուշադրութիւնը դրաւեն և Չինաստանի հետ վաճառականական յարաբերութիւն հաստատել տալու գրդիւ ըլլան :

—Սմերիկայի Պոսթըն քաղաքին մէջ աղջիկ մը ստակով հասարակութեան ի տես գրուած է եզեր : Սյուսուկան բերանը՝ աչքը՝ քիթը և ախանջը տեղը ըլլալով, երկու գլուխունի ուտելու խօսելու և երգելու տեսնը շատ անգամ երկու բերանը կ'ործածէ, և երբեմն մէկ գլխովը դործը տեսնելով՝ միւս գլուխը չգործածէր, այսինքն՝ մէկ բերանովը կերակուր կուտէ ու կխօսի, և միւս բերանը չբանար եզեր : Երգելու տեսնը երբեմն մէկ բերանովը՝ բարձր, իսկ միւս բերանովը ցած ձայն կհանէ. պէտք եղած ատենը մէկ և երկու հոդիկ հետ կխօսի, և երբեմն ալ ինքնիրեն խօսելով՝ մէկ բերանովը կհարցունէ ու միւսովը կպատասխանէ եզեր :

—Փարիզի մէջ 4730 սրճարան կայ և ամբին 120 միլիոն ֆրանգի առուտուր կըլլայ եզեր : Ասոնց մէջ դործածուած 8—10 հազար սոյառուորաց

չառերը՝ որոշեալ շարածական ուամ-
սական չունենալով, յաճախորդնե-
րուն առած պարգևներովը կապրին,
որ տարին 3 միլիոն ֆրանգէն աւելի
կըլլայ եղեր :

Գարադիւղէն մինչև Պէյօղլու
երկաթուղի մը շինելու արտօնութիւն
ունեցող Գարաբանոս էֆէնտին օս-
մանեան պանքային և Սօսիէթէ Յէ,
նէրալ ընկերութեան հետ պայմանա-
գրութիւն մ'ըրեր է, յիշեալ գործին
շուտով սկսելու համար :

— Պազտատէն եկած լուրերուն
նայելով, օսմանեան սահմաններուն
մօտ պարսկական երկիրներուն մէջ
երբեմն երբեմն երևան ելնող քօլէ-
րան վերջին օրերս դարձեալ սկսեր է:
Ռուսի տեղական կառավարութեան
կողմանէ զըռչութեան միջոցներ ձեռք
առնուեր են որպէս զի չըլլայ թէ օս-
մանեան հոյն անցնի յիշեալ հիւան-
դութիւնը :

— Գաղղիոյ լրագրաց ոմանք գար-
ձեալ կժամուցանեն թէ՛ գաղղիական
պաշտօնէից մէջ վտօխօսութիւն պիտի
ըլլայ, և թէ՛ շատ հաւանական է որ
պաշտօնէից նախագահութիւնը Պ.
Ռուէի յանձնուի, որ այս օրերս յա-
ճախ կանոնուի Նարոյէան կայսեր հետ :

— Սպանիոյ սոժամանակեայ կա-
ռավարութիւնը աուրքը 400ին 23էն
աւելի բարձրացուցեր է, արաքին
պարտուց վճարման համար :


— Գաղղիոյ կայսրուհին 8000 ֆր-
րանկ ընծայեր է Լալրնէի Պուլլաք և
ուրիշ ազգէ հռոմէական կղերական
նայ :

— Ռուսիոյ կառավարութեան լը-


րագրական քիչ մը ազատ օրինոց մը
բաղիւր մը առաջարկուեր է, բայց
ընդունուեր :

— Կըսուի թէ, Աւստրիոյ կայսրը
վիէննա չգարձած, Մարսիլիոյ ճամբու
Փարիզ ալ երթալով Նարոյէան կայսեր
հետ պիտի տեսնուի, և թէ՛ այս տե-
սակցութիւնը բոլորովին քաղաքական
նպատակէ զուրկ չպիտի ըլլայ :

Բարձրագոյն հրամանաւ ամուսն
մը համար դադարեալ Մանդուկ
էֆէնտար և Լէվրնիթ թայմըզ լրագր-
ները շարած օրը հրատարակել սկսան
դադարման որոշեալ ժամանակն լրա-
ցած ըլլալով :



Պօլիս Գալաֆեան դրատունը 3
կան զուրուչի կժախուի տետրակ մը
որ կապրեցունէ կերակուրներ եփելու
և խմորեղէններ շինելու եղանակը :



Էֆէնտի կամ Յէնէ Խոպէ անուան
նոր հրատարակութիւն մը 8 ակն-
զուրուչի կժախուի Պօլիս Չաղմաղ մը
լար Եօղուչու Գալաֆեան գրատունը :

Պօլսոյ քաղաքապետութեան ժո-
ղովին անդամ մեծ Մէհմետ Մխաթ
էֆէնտին դաղղիարէնէ տաճկերէն
թարգմանած է այս կարևոր ու պատ-
ենի հեղինակութիւնը :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԻ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԷ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ԳԻՐԵՃԱՆ